

## ԵՐԱՐ ՀԻՇԱՏԱԿԱՑ

ՄԵՍՐՈՊ ՍՐԵՔԵԱԿՈՍՍ ԱՇՃՅԱՆ ԿԱԾԱՍԿԵՐՊԱՑ

Բ ՈՒՆԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒ

ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅՍՏԱՆ

Պատահականություն չէ, որ քրիստոնեությունը Հայաստանի պետական կրոն Հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների զրասենյակի վարիչ-քարտուղար Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը տոնակատարությունների շրջանակում առանձնացրեց միջոցառումների մի գեղեցիկ փունջ՝ ուխտագնացություններ Արևմտյան Հայաստանում գտնվող հայոց հավատի սրբավայրեր՝ Նշանավոր և մեզ դեռևս անհայտ վանքեր ու եկեղեցիներ: Ինքը՝ սրբազանը, լինելով հայոց Մեծ եղեռնից հրաշքով փրկված ծնողների զավակ, ծնվելով օտար հողում և հաստատվելով օտար երկրում, միշտ ապրել է հոգեպես փարված իր հողին, հայրենիքին, հարազատ ժողովրդին:

Եվ բնական է, որ, համդիսանալով Հայաստանի քրիստոնեացման 1700-ամյակի տոնակատարությունների կազմակերպիչներից մեկը, Մեսրոպ սրբազանն իր հայացքը պիտի հառեր նաև այն հողին, որտեղ խորն են մխրճված մեր ժողովրդի հոգու և հավատի արմատները, քանզի այնտեղ են մեր շատ սրբավայրերը, սրբերի վկայարանները, նահատակ Հայրապետների շիրիմները: Այդ հողը կանչում է նրան անընդհատ՝ թե՛ երազում, թե՛ տեսիլքում, թե՛ իրապես: Եվ նա, ականջալուր այդ կանչին, փարված իր վաղնջական կարոտին, դարձավ հիշատակաց երկրի առաջին ուխտավորներից մեկը:

Որոշվեց ուղևորության օրը՝ 1998 թվականի հունիսի 9-ը: Կազմվեց պատմական հայրենիքի կարոտյալների առաջին խումբը: Նրանք այն 25 ուխտավորներն էին, ովքեր գնում էին փնտրելու, գտնելու, փայփայելու այն հողը, որի ծնունդն էին իրենց նախնիները՝ նախապապերը, պապերն ու ծնողները: Իսկ հողն էլ իր կարոտն ուներ՝ խորունկ անթեղած սրտում, անհագ մի կարոտ՝ իրենից ծնված, իրենով ապրած, իրեն սիրած, իրեն փարված, ու իր մեջ ամփոփված մարդկանց սերունդների կանչի, սիրո և համբույրի: Եվ հայի այդ 25 բեկոր ուխտավորները գնում էին գրկախառնվելու իրենց աղյան, հոգու և հավատի ակունքին՝ նախնյաց հողին, որի վրա հիշատակաց նշխարներ էին միայն պահպանվել: Նրանց կարոտը զարմանալի մի գույն ուներ՝ շաղախված հայրենի երկրի գույներից ու բույրերից, որ ճառագում էր ուխտավոր նվիրյալների աչքերից: Իսկ դրանք պայծառ էին, չնայած կորցրած ու ավերված հայրենիքի ցավից ծնված թախծին, փայլում էին այն վերագտնելու հույսի շողով և Տիրոջ հանդեպ ունեցած մեծ հավատով: Իրենց կարոտների հայրենիքում էին նրանք՝ աշխարհի տարբեր քաղաքներում ապրող այդ մարդիկ, ինչպես նաև օտարազգի գիտնականներ՝ աշխարհագետ պրոֆեսոր Ռոբերտ Յուսեմը, հայագետ պրոֆեսոր Փիթր Զաուին, հրապարակախոս Արուսյակ Փափազյանը, երաժշտագետ Գրիգոր Փիտեճյանը, Ս. Էջմիածնի սարկավագ Հայկ Փամաղեյանը, լուսանկարիչ Հրայր Բազեն և ուրիշներ: Ուխտագնացության ընթացքում նրանց հայրական օրինության խոսքով էր ուղեկցում աստվածահաճո այդ նախածեռնության հեղինակ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը՝ օժանդակությամբ Արմեն Արոյանի ղեկավարած կազմակերպության:

Հողի կարոտ... Այդպես բնութագրեց հայ ուխտավորների հոգեվիճակը մի թուրք մարդ: Նա էվքերեի երբեմնի հայոց եկեղեցու մուտքի մոտ ականատես եղավ հուզիչ մի իրողության: Այստեղ ապրած հայերի երկրորդ կամ երրորդ սերունդը եկել էր համբուրելու իր նախնիների հողը:

«Հողի կարոտն ունեն սրանք»,- մտմտաց թուրքը:

**ԿԵՍԱՐԻՄ** - Ուխտագնացության առաջին հանգրվանը Կեսարիան էր, ուր ուխտավորները հասան հունիսի 13-ին, շաբաթ օրը:

Երանք Կեսարիայի Աբ. Գրիգոր Լուսավորչի եկեղեցի մտան այն ժամանակ, երբ մատուցվում էր Աբ. Պատարագ: Պատարագը նվիրված էր Կիրակից Լուսավորչի ելնելուն: Օրվա քարոզիչ քահանան՝ Տեր Գրիգոր Տամատյանը, զարմանալի մի զուգահիսությունը խոսում էր ուխտավորի առաքելության մասին: Նա ընդգծում էր այն ճշմարտությունը, թե Քրիստոսի եկեղեցու անդամները մեր առաջնորդներն են՝ մեր ուխտի ճանապարհներին: Բոլորին ուղեկցում էր աստվածային խոսքը. «Այ երկնչիր, հոտ փոքրիկ» (Ղուկ. ԺԲ 32): Այդ փոքրիկ հոտը հունիսյան այդ օրը խմբվել էր Թուրքիայի մի անկյունում ծվարած որբուկ եկեղեցու մեջ, որն արտակարգ շքեղ խորան ուներ, այնքան շքեղ, որ իր գեղեցկությամբ հավանաբար կզիջեր միայն Երուսաղեմի Աբ. Հակոբի խորանին: Այս եկեղեցին, գտնվելով Թուրքիայի Հայոց Պատրիարքության հովանու ներքո, գործում էր:

Հաջորդ օրը ուխտավորների հայացքները քարացան ակումբի վերածված Կեսարիայի հայոց Սուրբ Աստվածածին եկեղեցու մուտքին: Խորունկ ցավից մորմոքեցին նրանց հոգիները, երբ տեսան նաև մյուս ավերակված սրբատեղիները՝ Էվբերիի Աբ. Ստեփաննոս եկեղեցին, Թոմարզան, Թալասը, Էվերեկ Ֆենեսեն, Մունճուսունը և այլն:

Կիրակի գիշեր Մալաթիայի վրայով ուխտավորները հասան Խարբերդ և գիշերեցին Ծովք-Կելվճուքի ափին:

**ԽԱՐԲԵՐՈՂ** - Ուխտավորները այցելեցին բնող, Սուրսուրի գյուղ, իսկ Բալու քաղաքից հետո նրանք եղան Արթիսան, Ապրանք, Հավավ, Շնագ, Սագրաթ, Չեթ գյուղերում: Այստեղ մի քար, այնտեղ պատի միջից երևացող մի խաչքար, քիչ հեռու մի աղբյուրի վրա հավերժացած արձանագրությունները հիշեցնում են, որ այս երկիրը հայոց երկիր էր, այստեղ աղոթող, աշխատող, լավ ու վատ օրեր տեսած հայեր էին ապրում...

**ՏԻՐԱՆԱՍԿԵՐՏ** - Այստեղ է գտնվում Ս. Կիրակոս եկեղեցին: Կրկին տխուր էին ուխտավորները, որովհետև եկեղեցին՝ Յոթը խորան հոյակերտ տաճարը, տանիք չունի: Կատարվեց ժամերգություն, ապա ուխտավորները մեկ անգամ ևս դիտեցին եկեղեցու մատուռի մեջ գտնվող Տիրամոր ավերված պատկերը... Մեր պատկերն էր այն՝ մի հայ Տիրամայր, որին թագադրում էին հրեշտակները: Բայց վիրավոր էր Տիրամայրը և տխուր, իսկ գրկում նորածին մանուկ Հիսուսն էր: Ուխտավորները խորհում էին. «Ե՞րբ պետք է բարի մի ձեռք վերանորոգի և փրկի այն քայքայումից»:

Մեքոպ սրբազանը Տիրաճանակերտից շնորհավորական հեռագիր է հղում Բոստոն, որտեղ, Սուրբ Երրորդություն եկեղեցում, մեկ-երկու օրից ամուսնանալու էր Տիրաճանակերտում ծնված Աթենեսյան ազգամուսուկ մի երիտասարդ, որը խոստացել էր օժանդակել Ս. Կիրակոս եկեղեցու վերանորոգմանը: Եվ զուր չէ, որ սրբազան հայրը իր շնորհավորական հեռագրի մեջ ասում է. «Ս. Կիրակոսը շնորհավորում է քեզ», և նաև մտածում. «Երանի թե Ստամբուլի մեր Պատրիարքարանը շուտով ձեռնարկի Ս. Կիրակոսի նորոգության աշխատանքները, և մենք էլ մեր հերթին շնորհավորենք երկնավոր Փեսային՝ մեր Տիրոջը, իր նորոգված եկեղեցու մեջ և կարողանանք երգել.

Ուրախ լըր Սուրբ եկեղեցի,  
Քանզի Քրիստոս՝ Արքայն երկնից  
Այսօր պսակեաց զքեզ խաչին իւրով  
Եւ զարդարեաց զամուրս քո  
Սքանչելի փառօք իւրովք»:



פארען פון אונזערע שולער און אונזערע קינדער אין אונזערע שולער אין אונזערע שולער אין אונזערע שולער



**Մեռ Անտառ** - Այս ուխտագնացության բարձրակետը Մշո Սուլթան Սուրբ Կարապետն էր: Ղեռ անցյալ տարի պետականորեն արգելված էր այցելությունն այդ սրբատեղի: Միայն բազմաթիվ դիմումների շնորհիվ հնարավոր եղավ իրականացնել բաղձալի այցը Սուրբ Կարապետ: Ուխտագնացները հունիսի 16-ի երեկոյան Սուշում էին: Գիշերելով նորակառույց հյուրանոցում նրանք ամիս ունեցան հյուրանոցի աշխատակից քրդերի երգ ու պարի ունկնդիրն ու ականատեսը դառնալ: Քրդերը պարում էին իրենց այնքան ծանոթ երախուշտան, Լորքե-լորքեն, իսկ հայերը մտածում էին. «Իրենց պարերն են, իրենց երկիրը, սակայն պարողը քուրդն է»:

Հունիսի 17-ի առավոտյան երկու զրահապատ կառքերի, ոստիկանների մեկ ավտոմեքենայի և մի խումբ գաղտնի ոստիկանների ուղեկցությամբ ուխտավորները Սուշից շարժվեցին դեպի Մշո Սուլթան Սուրբ Կարապետ, որը տեղացիները անվանում էին Զանկիլլի (Զանգակավոր) վանք... Տխուր ավերակներ, քանդված պատեր, պահեստ, գոմ, ավանդատուն, ավերված խորան... Այս ամենից խիստ վշտացած ու տրտում ուխտավորների խումբը, այնուամենայնիվ, ուժ ունեցավ հավաքվելու Մեսրոպ սրբազանի շուրջը և երգելու Լուսավորչի շարականը, որը կարծեք թե իր ոգով և թե բառերով հնչում էր այսօրվա Հայաստանի համար.

Ի ձեռն առեալ Լուսավորչին  
զնշխար սրբոյ Կարապետին,  
շուրջ պարսպեալ զկողմ աշխարհին,  
շնորհօք աջոյն զբանն օծողին,  
աստ թշնամիք մի՛ զօրասցին,  
մի հերձուածոց աղանդ բուսցին.  
յերկնից գայր ծայն աստուածային,  
թէ հայրուածք քո կատարեսցին:



Այս է մնացել Մշո Ս. Կարապետ վանքից

Հետո՝ հոգեհանգիստ: Սրբազան հայրն իր աղոթքի մեջ հիշեց մեր նահատակներին, ներկա ուխտավորների ընտանիքները՝ Վարդան վարդապետ, Խրիմյան Հայրիկ, Փիտեճյան ընտանիք, Խաչատուրյան ընտանիք, Անդրանիկ,

Ջողյան ընտանիք, Գյուլան ընտանիք, Ռուբեն, Գրայր, Քաուի ընտանիք, Փափազյան, Սարաճյան ընտանիքներ, Գևորգ Զաուշ, Աղբյուր Սեբոր, Արոյան ընտանիք, Աշխյան ընտանիք, Մշո Գեղամ, Գյուլիզար, Գամաղեյան ընտանիք, Սանավյան ընտանիք: Հոգեհանգստյան աղոթք կարդացվեց հանգուցյալների հոգիների խաղաղության համար: Այս այցելությունը մի ամիս էր Մշո Սուրբ Կարապետի մեջ հիշելու նաև մեր ողջ ժողովրդին, որ դարձեր շարունակ հավատով, սիրով ու վստահությամբ է նայել այս սրբավայր-եկեղեցուն:

Բայց հիմա ինքը՝ մուրատատուր սուրբը, յոթնանուն սուրբը, հայոց նվիրական ուխտատեղին Իննականյա վանքը, Գլակա վանքը ավեր է ու սգակիր:

Հոգեկան մխիթարության ինչպիսի՜ պահեր են ապրում ուխտավորները. 1915 թվականի սև օրերից հետո առաջին անգամ այստեղ տարածվեց խնկարույրը՝ խունկ ծխվեց և վերստին կենդանացավ հայոց ոգեղեն այս տաճարը:

Սրբազանը նշեց, որ Սուրբ Կարապետը այսօր մեր երազն է, ավելի՜ քան մեր տեսած ավերակը: Նա հիշեց, թե Օտտավայի բանտում ինչպես էին երեք հայ երիտասարդներ փայտիկներով կազմել իրենց համար նվիրական Սուրբ Կարապետի մանրակերտը՝ ապավինելով նրա հրաշագործ գոռությանը:

Դոկտորներ Գյուլանը և Քաուին հիշատակի խոսք ասացին՝ վկայակոչելով պատմական փաստերը:

Բայց Ս. Կարապետի ուխտավորներն ի վերջո նաև սգավորներ էին: Նրանց հոգիներում դեռ մխում էր 83 տարվա վաղեմություն ունեցող սգո մորմոքը: Սակայն այդ նույն հոգիները ցնծում էին նաև ուրախությունից, երբ քուրդ հյուրընկալները սրբազան հորը, ցույց էին տալիս Գրայր Դժոխքի Սհարոնք գյուղը, ցրոնքցի Սուրադի գյուղը, Գելիգուզանը, Առաքելոց վանքը:

Նայում էին նրանք շուրջքուրդը, հաղորդակից դառնում անցյալին, երազում, կարծես Ռուբենն է նկարագրում Տարոն աշխարհը:

Ուխտավորները համզատացան Սուլուխի կամրջի մոտ և հիշեցին «Սոսկում ահավոր»-ը, «Զքնաղ մայիսի 27»-ը, քանի՜-քանի՜ տարի առաջ այստեղ էր, որ մի գիշեր իր մահկանացուն կնքեց Գևորգ Զաուշը՝ վերջին համբույրն ուղարկելով իր Վարդգես որդուն և համբուրելով «հողը քաղցրիկ հայրենյաց»:

**ԱՌ. ՎԱՍԱԿՈՒԹԱԿԱՆ** - Հունիսի 17-ին ուխտավորների խումբը Մշո աշխարհից շարժվեց դեպի Վասպուրական անցնելով Նեմրուք սարով, որ նրանք աղոթք մրմնջացան Սոսե մայրիկի հիշատակին, որ ծնվել էր այդ սարի ստորոտին փռված թեղուտ գյուղում: Եվ հետո Սիփան սարի հայացքի ներքո առաջացան Դատվան, Խլաթ, Արծկե, Արճեշ և Վան: Հաջորդ առավոտ, հունիսի 18-ին աղոթք և հոգեհանգիստ երբեմնի դրախտավայր Վանի ավերակներում, ապա այցելություն Արտամեստ, Շատախ, Սուրբ Տիկին գետ, հետո ողջույն Արշիլ Գորկու ծննդավայր Խորգոմին և հուզումնալից հանդիպում. ուխտավորները Աղթամարի Ս. Խաչ եկեղեցուն էին: Բոլորի այցերում արտասուք կար, կարոտ ու բողոք կար:

Այստեղ էր, որ նրանք հանդիպեցին կանաչաչվի 20-ամյա մի հայ աղջկա: Եվ հանկարծ նրա զարմացած հարցը հնչեց. «Դա՞ն էք, հայ եք, բոլորդ էլ հա՞ն էք»: Չէր հավատում: Աղջիկն իր ամերիկացի ընկերուհու հետ եկել էր Արևմտյան Հայաստան՝ իր պապերի երկիրը, և երջանիկ էր, որ այստեղ այդքան շատ հայերի էր հանդիպում: Սրբազան հայրը օրհնեց Ֆիլադելֆիայից ժամանած Ցոլինին, որ ունկնդիր իր ցեղի կանչին եկել էր Վասպուրական՝ հայոց զարմանահրաշ այս բնաշխարհ: Հուզիչ պահ, համբուրելի հայուհի... Մենքուպ սրբազանը Ս. Խաչ տաճարում աղոթելով՝ հիշեց Վասպուրականի հետ կապված թանկ անուններ, դեմքեր, հիշատակեց սրբազան մասունքներ, գնահատեց ուխտավորների հայրենասիրությունն ու հավատը և հորդորեց. «Մի լացեց և մի ողբացեց: Դուք այսօր ուրախություն բերեցիք Վանա լճին և ձեր սիրով մեղմեցիք նրա աղի դառնությունը: Եվ այսօր ձեզանով ցնծում են Ս. Խաչի

քարերը, լեզու են առել Աղթամարի քանդակները: Քարերի արգունքն այսօր ցամաքել է, նրանք իրենց Տիրոջ պատկերն են տեսնում ձեր մեջ, քարերն այսօր երջանիկ են ձեզանով»:

Սակայն սրբազանի այս խոսքերն անգամ ի գորու չէին սրբել վշտի ու կարոտի արցունքը այս մարդկանց աչքերից, որոնք տարբեր մասնագիտությունների և դիրքի տեր անձեր էին, բայց այս պահին նրանց բնութագրում էր միայն մեկ բառ՝ հայ:

Նավը հեռանում էր Աղթամարից, և Աուրբ խաչը փոքրանում, փոքրանում էր ու կարծես դառնում փոքրիկ մի սիրտ՝ վիրավոր կրծքին: Ուխտավորներից մեկը «Դե՛ս յամանն» է երգում: «Երեճուհի Փիտեճյանն է: Բոլորի աչքերում լճացած արցունք կա: Նրանցից մեկը՝ դոկտոր Տեր-Մխչեյանը, կարծես փորձում է բառերով բուլդրի վիշտը արտահայտել. «Լսելը և գալ-տեսնելը տարբեր են: Բայց եթե այդ բոլորը տեսնելուց հետո դարձյալ անտեր պիտի թողնենք այն, ապա իսկական տառապանքը կլինի այդ»: Նավը այնքան հեռացավ, որ կղզին հագիվ էր նշմարվում: Հանկարծ մեկը ինքնաբուխ սկսեց երգել Կոմիտասի «Սիրտս նման է»: Հայկ սարկավազն էր:

**Լուսավորչական սեռեր** - 21 հունիսի. Կարս և Անի այցելելուց հետո, ուխտավորները Իզդիրից ճանապարհվեցին դեպի երզրում և ապա Թերջան, Բազայրիճի վրայով հասան Երզնկա, որ 1700-ամյակի առթիվ ուխտազնացության առանցքն էր, որովհետև Երզնկայում և նրա շրջակայքում էր քարոզել, մկրտել, հոգևոր պատերազմի ելել Ս. Լուսավորիչը:

**Երջան** - Մեր հնամենի և միայնակ մնացած քաղաքներից է այն՝ հայոց հեթանոսական կրոնի հոգևոր խոշոր կենտրոնը:

Մեծն Տիգրանի օրերից սկսած այստեղ կանգնած են եղել հին աստվածների արձանները՝ Վահագն, Անահիտ, Աստղիկ, Նանե, Բարշամինե: Այդ պատճառով էլ Լուսավորիչը, բազում դժվարությունների գնով, հեթանոսական աստվածների բազմանների վրա բարձրացրեց քրիստոնեական կրոնի աղոթավայրերը: Եվ այդտեղ էլ ինքն ապրեց ու ձգնեց:

Այստեղ է գտնվում նշանավոր Սեպուհ լեռը, որի Մանեի այրում թաղվեց մեր հավատի սրբազան հայրը: Նշխարաց գյուտից հետո նրա մարմինը բերվեց Թորղան ավան:

Հացորդ օրը ուխտազնացները այցելեցին հայոց քրիստոնեության արշալույսի հետ կապված գյուղերն ու ավանները: Այստեղ նրանց տարօրինակ մի զգացում էր պաշարել: Ձարմանալիորեն լավում էր քարերի ձայնը: Տեղն անապատ էր, երբեմն՝ անմարդաբնակ: Ամենուր լռություն էր, բայց քարերը կարծես խոսում էին, աղաղակում իրենց հայությունը: Վաղուց չէին հանդիպել այսքան հայերի, և պատմելու շատ բան ունեին: Եվ խոսում էին, խոսում ու անընդհատ պատմում...

Ուխտավորները եղան խախումում, հիշեցին Ներսես Մեծ Հայրապետին, որ, ըստ ոմանց, Պապ թագավորի կողմից թունավորվել էր հենց այս գյուղում: Հայրապետի մարմինը Արիստակես Կաթողիկոսի կողմից թաղվել էր Թիլ ավանում, հետո այնտեղ կառուցվել էր Ջուխտակ Հայրապետաց վանքը: Ուխտավորները տեսան վանքի միայն ավերակները: Թիլ... թեև այս անունը ոչ բոլորը գիտեն, բայց դարավոր հողը գիտի այն և նաև գիտի հիշատակները սրբորեն ամփոփելու խորհուրդը:

Խումբը շարժվում է դեպի Թորղան, որը հիմա Տոկան է կոչվում: Այն Լուսավորչի պարտեզն էր, նրա կալվածքը: Այնտեղ են թաղված Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ թագավորը, Վրթանես և Հուսիկ Հայրապետները, նաև Աշխեն թագուհին և խոսրովիդուխտ արքայաջուլը: Ի հիշատակություն այնտեղ թաղված ինը սրբերի, եկեղեցին կոչվում է «Ինն սրբոց զերեզմանաց վանք»: Չմայած որ այն կիսաքանդ է, այնտեղ էլ պաշտամունք տեղի ունեցավ, հիշեցին սրբերին, հայցեցին նրանց բարեխոսությունը...



Այստեղ դոկտոր Քաուլին կարողաց մի հատված Գովհաննես Երզնկացի Պլուզ վարդապետի այն քարոզից, որը նա խոսել էր 1268 թվականի ամռանը, երբ ուրիշ ուխտավորների հետ եկել էր Սեպուհ լեռ՝ այցելելու Լուսավորչի գերեզմանին:

Ուխտագնացության վերջակետը հունիսի 22-ի երթն էր՝ Երզնկայից դեպի Սեպուհ լեռան կողմերում ծվարած Ավագ վանք, որը, ըստ ավանդության, հիմնվել էր Ս. Թադեոս առաքյալի կողմից: Գետագայում Ս. Լուսավորիչը այնտեղ բարձրացրել էր Ս. Կարապետի մատուռը և հետո կառուցել Ս. Գրիգոր Եկեղեցին: Այն իր կարևորության համար կոչվել էր Ավագ վանք:

Ուխտավորները երջանիկ էին: Նրանք, չնայած դժվարություններին, այնուամենայնիվ կարողացան հասնել վանք: Ինչպիսի՞ մխիթարություն. երկու ժամից ավելի լեռների մեջ քայլելուց հետո գտնել վանքի ավերակները, այնտեղ տեսնել քանդակ ու խաչ, հիշել պատմությունը, հիշել անցյալը և հավաստել հավատարմության իրենց ուխտը Լուսավորչի Աստծուն:

Այս պահին նրանցից յուրաքանչյուրը մի երազ ունի. «Տա Աստված, որ Ավագ վանքի այս ուխտագնացությունը եզակի չմնա, այլ ուրիշ ուխտավորներ էլ այցի գան այս վանքին ու այս հողին: Զ է որ այս հողի վրա մի օր քայլել է Լուսավորիչ Գայրապետը՝ Գայոց պատմության և հոգևոր աշխարհի այն նշանավոր դեմքը, որի առաքելությամբ կարողացանք պահել ազգային մեր դիմագիծը, հայրենիքը, լեզուն, մշակույթը, որոնք իբրև ազգություն բնութագրել և բնութագրում են մեզ»:

Վերջին հանգրվանները դարձան Շնապին Գարահիսարն ու Սեբաստիան:

Ուխտավորները երջանիկ էին: Այդ այցելությամբ նրանք եղան իրենց նախնիների երկրում, ապրեցին այնտեղ, վայելեցին հայրենի հողի հյուրընկալ ջերմությունը, վերանորոգեցին իրենց հավատը: Վերադարձը տխուր էր, բայց կրկին այցելելու հույսը կար այդ տխրության մեջ: Նրանք երազների հայրենիքն ամփոփվեց այն մի բուռ հողի մեջ, որ տաքան իրենց հետ: Այն կորվի յուրաքանչյուրի տան ամենապատվելի մի տեղում՝ իբրև սրբություն, քանզի իր մեջ ամփոփում է թանկ և սրբազան նշխարներ: Այն նաև կարոտի չմարդ կանչ կղառնա ուխտավոր այդ հայրի, նրանց սերունդների համար՝ հիշեցնելով, որ կա և հավերժ է «Հիշատակաց երկիրը», սուրբ է հայրենի հողը, և ամուր է հայոց հավատը: Սակայն այն միշտ հուշելու է նաև, որ մեր հողը կարմիր է, ինչպես նահատակ բանաստեղծ Վարուժանն է գրում.

Գրասեղանիս վրա սա սկառուակի մեջ

կա բուռ մը հող հայրենիքեն...

Կարմիր է ան...

Կարմիր այդ հողը մեր հավատի պահապանն է, մեր հոգին է, մեր կարոտը, մեր երազը...